

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 300

«Ն ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՒՄԱՅՐԻԻ ԲԱԺՆԻ ԹԻՎ 146 ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ «Ն ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ Վահրամ Խաչատուրի Ենգոյանս, վերանայելով «Ն ոստիկանության Կումայրիի բաժնի պետի կողմից «13»04 2020 թ.կայացված թիվ 146 որոշումը, պարզեցի, որ.

ՇՄ ք. Գյումրի, Սպարտակի փողոց, 24 տան բնակիչ՝ Ժաննա Ռաֆիկի Թադևոսյանը

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «Ն օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 10-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք 100.000 «Ն դրամի չափով:

Հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «Ն օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» 2020 թվականի մայիսի 19-ի թիվ ՀՕ-265-Ն օրենքի 2-րդ հոդվածը և առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 67-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Վերանայել Ժաննա Ռաֆիկի Թադևոսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Ն օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 10-րդ մասով կիրառված տույժը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով նշանակված տուգանքը, փոխարենը կիրառելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Ն օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված տույժը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով տուգանքը (10.000 «Ն դրամ):

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «Ն օրենսգրքի 287-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է գանգադարկվել (բողոքարկվել) սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «Ն օրենսգրքի 288 հոդվածով սահմանված կարգով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգադար կարող է արվել որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում:

«Ն ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝ Կ.Տ.

*(Handwritten signature)*

Վ. Խ. ԵՆԳՈՅԱՆ